

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ*

*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ» ՊՈԵՄԸ (ԱՅԼԸՆԹԵՐՑՄԱՆ ՓՈՐՁ)

Օ՛հ, ի՞նչ փույթ կյանքը մեռնող,
Երբոր երազը կապրի,
Երբոր երազն անմահ է:

Դ. Վարուժան

*Բանալի բառեր՝ ժողովրդական ավանդություն, հեղինակային մտահղացում,
արվեստի նպատակ, արվեստագետի կոչում, գեղեցիկ պաշտամունք, դավա-
ճանություն, պոեմի տարբերակներ:*

Ներածություն

«Թմկաբերդի առումը» Հ. Թումանյանի այն պոեմներից է, որոնց առաջին տպագրությանը (1905) հաջորդած մի քանի հրատարակություններում բանաստեղծը որևէ էական փոփոխություն չի կատարել: Բայց եթե, ասենք, «Ալեք», «Մեհրի», «Մերժված օրենք» պոեմներին նա այլևս հարկ չի համարել անդրադառնալ, որովհետև դրանք համարել է անցած շրջան իր ստեղծագործական կյանքում, ապա «Թմկաբերդի առումի» առաջին իսկ տպագրությունը, ըստ ամենայնի գոհացրել է խստապահանջ բանաստեղծին, ուստի հետագա հրատարակություններում հեղինակը, բացի ոճական, մեկ-երկու տեղ նաև՝ մասնակի բովանդակային ճշգրտումներից, այլ փոփոխությունների անհրաժեշտություն չի տեսել: «Լոռեցի Սաքոյի» կամ «Անուշի» հետ համեմատած, կարելի է ասել, «Թմկաբերդի առումը» գրվել է մի շնչով 1902-ին՝ աբասթումանյան աննախադեպ ստեղծագործական վերելքի օրերին:

Առաջին տպագրությունից սկսած՝ պոեմն անմիջապես հայտնվել է ժամանակի քննադատության բժախնդիր ուշադրության կենտրոնում, ինչպես նաև

* Հոդվածը ներկայացվել է 03.08.2019, գրախոսվել է 16.09.2019, ընդունվել է տպագրության 05.12.2019:

հետագա բոլոր ուսումնասիրողների շահագրգիռ քննությունների կիզակետում: Այդ ընթացքում պոեմի հետ կապված շատ խնդիրներ ստացել են իրենց հիմնավոր լուծումը: Բայց կան նաև այնպիսիք, որ մինչև այսօր էլ մնում են վիճելի կամ առհասարակ չեն բարձրացվել, որովհետև ծագել են վերջին տասնամյակներին: Այս համառոտ վերլուծական փորձի նպատակն է, անդրադառնալ այդ խնդիրներից մեկ-երկուսին՝ հիմք ընդունելով գրականության պատմության և տեսության, ինչպես նաև թումանյանագիտության դարավոր փորձը: Մասնավորապես՝ Թմկաբերդի մասին ավանդությունը և այլ համանման սյուժեներ,¹ որպես այդպիսի՝ են հետաքրքրել բանաստեղծին, թե՞ միայն ազդակ են ծառայել միանգամայն ինքնուրույն մտահղացման համար. բարոյական ու գեղագիտական ի՞նչ դրվածքով է մեկնաբանվում դավաճանության թեման պոեմում, գեղարվեստական ի՞նչ գործառույթ ունի աշուղի ներկայությունը այս համատեքստում, վերջապես, ինչո՞վ է կապվում այս ամենը «անարատ մարդու» թումանյանական իդեալի հետ:

Ինչպես ընթերցել պոեմը

Պոեմի ամբողջական ձեռագրեր չեն պահպանվել: Մեզ հասել են միայն մի սևագիր հատված և նախնական գրառման պատառիկներ, որոնք, ինչպես պարզվել է, վերաբերում են Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի լիբրետոյին², որի պատրաստմանը Թումանյանն այնպես էլ չի հասցրել մինչև վերջ մասնակցել³:

Պահպանված սևագիր հատվածը՝ 56 տող, պոեմի սկսվածքի նախնական տարբերակն է և հիմք է տալիս մտածելու, որ ամբողջ վիպասը «թափառական աշուղի» անունից պատմելու միտքը ծագել է ոչ թե պոեմի մտահղացման հետ միաժամանակ, այլ ավելի ուշ. սևագրում աշուղը ոչ թե պատմող է, այլ գործող անձ, այն էլ, ինչպես երևում է, կարևոր, որովհետև հեղինակը նրա մասին պատմում է բավական հանգամանորեն: Դա իր հերթին հուշում է, որ պոեմում աշուղի դերը, նախնական մտահղացմամբ իսկ ծանրակշիռ իմաստային բեռն-

¹ Դրանց մասին տե՛ս **Թումանյան** 1991, 542–543:

² Սպենդիարյանի հետ օպերայի լիբրետոյի վրա աշխատելիս անհրաժեշտություն է առաջանում, որ Թմկա տիրուհին անուն ունենա: Հ. Թումանյանն առաջարկում է Գոհար: Սպենդիարյանը հարմար չի համարում, քանի որ այդ անունը ռուսերեն դժվարարտասանելի է, և առաջարկում է հոմանիշներից մեկը՝ Ալմաստ, որ դառնում է նաև օպերայի անունը:

³ Պոեմի ստեղծագործական պատմության, բանահյուսական աղբյուրների մասին մանրամասն տե՛ս **Զրբաշյան** 1986, 344–387: **Թումանյան** 1991, 542–548:

վածություն պիտի ունենար: Այս պահը ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է ինչպես իր ժամանակին, այնպես էլ հետագայում: Սևագրին միայն հպանցիկ են անդրադարձել՝ պոեմի ենթատեքստի հետ կապված որևէ էական խնդիր չնկատելով այնտեղ: Էդ. Զրբաշյանը, օրինակ, գրում է. «Պահպանված որոշ սևագիր հատվածներից երևում է, որ սկզբնապես Թումանյանը մտադիր է եղել ավելի մանրամասն ներկայացնել բերդի գրավման պատմությունը, նույնիսկ այն հանգամանքները, որոնց մեջ «թափառական աշուղը» վարում է իր զրույցն ունկնդիրների հետ: Այդ հատվածներում հիշատակվում են նաև աշուղի անունը (Մալուկ), ունկնդիրների հետ նրա հանդիպման վայրը (Աճառ լեռներ, Խուլո բնակավայր) և ուրիշ մանրամասներ: Սակայն պոեմի վերջնական տեքստի մեջ պատմությունը կոնկրետացնող նման տվյալները բացակայում են, շարադրանքն ստացել է ավելի ընդհանրական նկարագիր՝ միաժամանակ և՛ էպիկական, և՛ փիլիսոփայական»⁴: Այսքանը միայն. ուրիշ, շատ ավելի կարևոր մանրամասներ էլ կան, որոնց մասին առհասարակ չի հիշատակվում: Մինչդեռ այս սևագիրը, անմշակ թերավարտությամբ հանդերձ, հետաքրքիր հետևությունների հնարավորություն է տալիս՝ կապված բանաստեղծի մտահղացման իրական բովանդակության հետ և կարող է նոր շերտեր բացել պոեմի հայտնի բարոյաբանության ծալքերում:

Նախ նկատենք՝ ո՛չ Երվանդ Լալայանի գրի առած ավանդության մեջ, որի հիման վրա է գլխավորապես ձևավորվել պոեմի սյուժեն, ո՛չ էլ բանաստեղծի ձեռքի տակ եղած այլ տարբերակներում կնոջը գայթակղեցնող և դավաճանության մղող աշուղի մասին խոսք չկա: Դա բացառապես բանաստեղծի մտահղացումն է, որ, ինչպես կփորձենք ցույց տալ, թումանյանական գեղագիտության բազմաշերտ կառույցի շրջանակներում ընդարձակում է ժողովրդական պատումի բարոյախոսական բովանդակությունը:

Պոեմի այս սևագիր սկսվածքը բավական խճողված կառուցվածք ունի, որ անհամատեղելի է Թումանյանի «աչքի նման պարզ և աչքի նման բարդ» լեզվամտածողության հետ, և նա պոեմի ավարտուն տեքստում հրաժարվել է այս հատվածից՝ ամբողջությամբ թողելով միայն մի քառատող.

Ղոնախ ենք ողջ էս աշխարհում
Մեր ծըննդյան փուչ օրից,
Էսպես գալիս անց ենք կենում
Էս անցավոր աշխարհից:

⁴ Թումանյան 1991, 545:

Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը...

Այս քառատողը ավարտուն պոեմի նախերգանքում, մասնակի ոճական փոփոխությունների ենթարկվելով, նոր համատեքստում ձեռք է բերել այլ իմաստ. եթե սկզբում այն կապվում էր «ունայն է ողջ» ավետարանական հայտնի մտայնության հետ, ապա նոր տարբերակում իմաստավորվում է «գործն է անմահ» կենսական բարոյախոսությամբ:

Սկզբից բաղկացած է երկու հատվածից՝ Առաջինը, որ, ըստ նախնական պլանի, հավանաբար նախերգանքի դեր պիտի կատարեր, իր հերթին գծիկով բաժանված է երկու մասի: Մեկում պատմող-հեղինակը տեղեկացնում է՝ սազը ուսին աշուղը, որ «շրջում է ազատ ամբողջ Կովկասում», թեքում է ճամփան, երբ մոտենում է իր հայրենի «զվարթ Աճառին»⁵, նաև խոստանում է պատմել՝

... թե ինչու համար

Փախչում է աշուղն էն լավ սարերեն

Եվ դեպի Աճառն ու իրեն աշխարհ

Անեծք է դրկում երգի փոխարեն:

Մյուսում պատմվում է, թե ինչպես «մի անգամ շատ առաջ մեր օրից» «աշուղ Մալուկ Աճառ լեռներից իջնում էր Խուլո»⁶: Ժողովուրդը սիրով ու ջերմությամբ է ընդունում նրան.

Հեյ ջան, աշուղ, բարով տեսանք,

Սազիդ ձենին մենք ղուրբան,

Դու մեր ախպեր, մեր օր ու կյանք.

Աստված կտրի քո ճամփան:

Երկրորդ հատվածում նկարագրվում է աշուղի ելույթը ժողովրդի առջև, որ հարկ ենք համարում բերել ամբողջությամբ.

Ու վեր է բերում մեծ սազը ուսից,

Սըրում է իրան բեխերը երկար.

Մեյդան բաց արած նստել է գյուղը

<1 անընթ. > լուռ լուռ <1 անընթ. >

Գնում է, գալիս <1 անընթ. > աշուղը

Ու հետզհետե լցվում ու լցվում,

Գնում է, գալիս, կանգ առավ հանկարծ,

Դոփեց գետինը, թռավ մեյդանում,

Կանչեց աշուղը, սազը մղկըտաց –

⁵ Ժամանակակից Աջարիան է, պատմական Զավախքի մի մասը:

⁶ Աջարական ԻՀ շրջանային կենտրոններից է, որ մի ժամանակ եղել է պատմական Զավախքի տարածքում:

Կիրակոսյան Վ.

Քյարամ Ասլիի գրույցն է անում:

Հեյ, ջամսիլաթ, ականջ արա

Վառվեց Քյարամ, էրվեց Քյարամ էն սիրուց...

Ներկայացվում է նաև ունկնդիրների ոգևորված արձագանքը.

Հեյ ջան, ուստա, սեր կանչիր, սեր,

Սեր <....> մեզ համար,

Թող <1 անընթ. > ջահել ու ծեր

Նոր կյանք անեն սիրավառ:

Թող մոռանանք չարությունը

Թող նորոգենք <....>⁷

Ինչպես ցույց են տալիս այս քաղվածքները, պոեմի նախերգանքում, բացի վերևում բերված քառատողից, սևագրից պահպանվել են նաև առանձին բառեր և արտահայտություններ: Օրինակ՝ նախերգանքի առաջին՝ «Հեյ, պարունե՛ր, ականջ արե՛ք» տողի նախատարբերակը սևագրի «Հեյ, ջամսիլաթ, ականջ արա» տողն է: Հատվածում հանդիպում են նաև նախերգանքի «մի բան պատմեմ հիմի ձեզ» և «անեժք նրա չար գործին» արտահայտությունների նախատարբերակներ:

Ակնհայտ է, ուրեմն, որ պոեմի նախերգանքը ձևավորվել է ըստ դիտարկվող սևագրի: Սակայն, եթե նախերգանքում հեղինակային մտահղացման բարոյափիլիսոփայությունը՝ մարդու անմահության երաշխիքը նրա գործն է, միանգամայն հստակ է, ապա սևագիրը, լինելով անավարտ, որոշ հարցականներ է թողնում: Մասնավորապես, անպատասխան է մնում մի կարևոր հարց՝ սկզբում հիշված անանուն աշուղը և աշուղ Մալուլը նույն ա՞նձն են, թե՞ տարբեր մարդիկ են՝ իրենց տարբեր դերերով: Եթե նույն անձն են, ապա հենց նա է այդ քստմնելի դերակատարը, դրա համար էլ նա հալածված ու մերժված է իր հարազատ միջավայրից: Եթե այդ դերակատարը Մալուլ անունով աշուղն է, ապա անանուն աշուղը ինքն է երես թեքել այն միջավայրից, որտեղ մի ուրիշ աշուղի ձեռքով կատարվել է չարագործությունը: Եթե ընդունենք երկրորդ ենթադրությունը, որ ավելի հավանական է թվում, աշուղ Մալուլ կոչվածը իրականում Շահի ուղարկված գայթակղիչն է՝ ծպտված կեղծ անունով:

Այս ենթադրության օգտին են խոսում նաև այլ կողմնակի նշաններ: Խուլո գյուղում աշուղ Մալուլի՝ ընդունելությունից զգացվում է, որ նա նոր մարդ է այդ միջավայրում: Ժողովրդի առջև աշուղի ելույթի նկարագրության մեջ, որ ամբողջ-

⁷ Մեջբերումները՝ Թումանյան 1991, 209–209:

Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը...

ջապես բերեցինք վերևում, հեղինակային հեգնանքի նկատելի մի շեշտադրություն կա, որ կասկած է հարուցում նրա անկեղծության վերաբերյալ: Այսպիսի հետևության հիմք տալիս է նաև աշուղի ելույթին ժողովրդի զգացմունքային արձագանքի բազմաբառ գունագարդված նկարագրությունը, որ անսովոր է Թումանյանի համար: Ուրեմն հեղինակին նախապես հայտնի է, որ այդպիսի ելույթներով աշուղն ուզում է ժողովրդի մեջ համբավ ու համարում ստեղծել իր անվան շուրջ՝ դյուրացնելու համար մուտքը Թմկաբերդ:

Պոեմի վերջնական բնագրում Թումանյանը հստակեցրել է այս խճճված իրավիճակը: Պատմողի դերն ստանձնում է սևագրի անանուն աշուղը՝ իբրև հեղինակային արժեհամակարգը կրող: Աշուղ Մալուլը պատումի արագացված հարահոս է մտնում դարձյալ անանուն՝ որպես Շահի «թովիչ երգիչ»՝ ծալոված թափառական աշուղի դիմակով:

Այսպես թե այնպես՝ բանաստեղծն այսպիսով բանահյուսական նախօրինակներում առկա դավաճանության երևույթի բարոյական իմաստավորման նոր մեկնակետ է հուշում՝ հանձին գայթակղիչ աշուղի կերպարի. եթե բանահյուսական նախօրինակներում դավաճանության հոգեբանական հիմքը կնոջ թեթևամիտ փառասիրությունն է, ապա Թումանյանի պոեմում դրան գումարվում է նաև գայթակղիչի դավադիր միջամտությունը:

Այուժետային այս նոր հանգույցի հավելումը հնարավոր է բացատրել ձևային նպատակահարմարության տեսակետից, քանի որ բանահյուսական նախօրինակներում թեթևամիտ կնոջ և նրան հրապուրողի միջև հաղորդակցության որևէ կապ չի նշվում, իսկ գեղարվեստական պատումի տրամաբանական զարգացման համար այդպիսի կապի որոշակիությունն անհրաժեշտ է: Բայց սևագիր հատվածի վերլուծությունը ցույց տվեց, որ Թումանյանի մտահղացման մեջ աշուղի գործոնը ձևային նկատառումից զատ ունի նաև կարևոր բովանդակային ենթաշերտ, որին կարելի է հասու լինել միայն արվեստի թումանյանական փիլիսոփայության համատեքստում: Ուստի տեսնենք, թե ի՞նչ ուղղությամբ է տանում բանաստեղծը այս թեմայի զարգացումը և ի՞նչ եզրակացության է հանգեցնում ընթերցողին:

Նախերգանքի վերջին երկտողը՝

Խոսքս, տեսեք, ո՞ր է գընում,

Քաջ որսկանի գյուլի պես,-

միայն գեղեցիկ համեմատություն չէ, այլ կանխանշում է պատումի զարգացման սլացիկ ընթացքը, որ իր հերթին հուշում է իրադարձությունների տեսանելի հոսքում որսալ հեղինակային խոսքի խորքային խորհուրդը:

Կիրակոսյան Վ.

Պոեմի առաջին գլխում՝ ընդամենը վեց քառատողի մեջ, բանահյուսական չափազանցություններով պատմող աշուղը ներկայացնում է հակառակորդ բանակների բախման մի լայնածավալ տեսարան՝ առանց ավելորդ մանրամասների, որը, սակայն, ընթերցողի երևակայության մեջ վառ պատկերանում է իր բոլոր արյունալի սարսափներով ու հաղթանակի վեհությամբ⁸։ Տեսարանն ավարտվում է բնորոշ քառատողով.

Ու միշտ ուրախ, հաղթանակով
Իր ամրոցն է դառնում նա.
Սպասում է էնտեղ կինը,
Ջահել կինը սևաչյա:

Այս քառատողով տրամաբանական կապ է ստեղծվում հաջորդ գլխի հետ⁹, որ Թմկա տիրուհու գեղեցկությամբ ներշնչված հիմներգությունն է։ Հարկ չկա մեջբերելու այդ հատվածը, քանի որ պոեմին շատ թե քիչ ծանոթ ամեն ոք անգիր գիտի այն դեռ դպրոցական նստարանից։ Գուցե հենց դա է պատճառը, որ ուսումնասիրողները սովորաբար երկար կանգ չեն առնում այս քնարական հատվածի վրա։ Մինչդեռ սա այն մեկնակետային պահն է, որի շուրջն են պտտվում, բախվում ու եղերական ավարտի հանգում բոլոր դրամատիկ անցուդարձերը։ Գեղեցկության այս հիմնը՝ բոլոր տեսակետներից անթերի հյուսված, թումանյանական հայտնի գեղեցկապաշտության¹⁰ բազմաթիվ դրսևորումներից մեկն է, որ պոեմի համատեքստում և՛ կառուցվածքային, և՛ ընդհանուր գեղագիտական նոր իմաստավորում է ստանում. գեղեցիկը անպարտելի ուժ է, քանի դեռ իր անձեռնմխելի բարձունքից է լուսավորում մարդկային կեցությունը, բայց երբ իջնում ու խառնվում է այդ կեցության ունայն շահագրգռություններին, դառնում է կործանարար չարիք։ Այս միտքը սրընթաց արագությամբ, բայց հա-

⁸ Հետաքրքիր է, որ ըստ Ժամանակի հայտնի քննադատներից Մ. Մատենճյանի՝ պոեմում ռազմական տեսարանների երկու նկագրություններից այս առաջինը «սառն է, որտեղ չկա իրարանցում, կռվի մեծ թափ» («Նոր դպրոց», 1910, 5 մայիսի)։

⁹ Այսպիսի տրամաբանական անցումով են իրար հետ կապվում պոեմի բոլոր գլուխները, որ անթերի կառուցվածքի հիմնական գրավականն է։ Կառուցվածքային այդ խնդրին անդրադառնալը մեր հրապարակման նպատակից դուրս է, քանի որ նախ՝ բոլոր ուսումնասիրողները այս կամ այն կերպ անդրադարձել են դրան, և ապա՝ չենք ուզում շեղվել պոեմի գեղագիտական-փիլիսոփայական ենթատեքստի վերաբերյալ մեր հիմնական հարցադրումից։

¹⁰ Մի առիթով բանաստեղծին համեմատելով քրիստոնյայի և սոցիալիստի հետ՝ Թումանյանը գրում է. «Մեկի պաշտամունքի կենտրոնը բարոյականությունն է, մյուսի իդեալը՝ ազատ ու արդար հասարակությունը, իմ և իմ նմանների պաշտամունքի առարկան գեղեցիկն է» (Թումանյան 1995, 491)։

Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը...

մոգիչ հետևողականությամբ զարգանում ու ողբերգական հաստատում է ստանում պոեմի վերջին գլուխներում:

Պոեմում գեղեցկության այս ոգեշունչ հիմնին, որ երկրորդ գլուխն է կազմում, անմիջապես հաջորդում է երրորդ գլուխը՝

Ու կռվի դաշտում Շահի առաջին

Արին մի անգամ գովքը սիրունի

սկսվածքով: Հարց է առաջանում՝ ո՞վ է այդ գովքն անողը, Շահի ինչ-որ պատահական զրուցակից, թե մեկը, որ գիտի գեղեցկության գինը և տիրապետում է ըստ պատշաճի ներկայացնելու արվեստին: Հետագա տողերը հիմք են տալիս ընդունելու երկրորդ ենթադրությունը: Եվ իրոք, պակաս ներշնչված չէ Թմկա տիրուհու գեղեցկության այս երկրորդ հիմնը.

Նրան իր տեսքով, հասակով, ասին,

Չի հասնի չըքնաղ հուրին Իրանի:

Ծով են աչքերը Ջավախքի դըստեր,

Ու կորչում է մարդ նրա հայացքում,

Ճակատը ճերմակ էն ձյունից էլ դեռ,

Որ բարձր Աբուլի կատարն է ծածկում:

Կնոջ գեղեցկությունը այսպես կարող է ներկայացնել միայն իր գործին հմուտ բանաստեղծ-աշուղը, տվյալ դեպքում՝ Շահի պալատական երգիչը: Այս տողերը ևս, իրոք, անկեղծ հիացմունքի տուրք են Թմկա տիրուհու գեղեցկությանը: Այսպես պատումի հենց սկզբից իրադարձությունների ոլորտ են ներքաշվում երկու հիմնական գործող անձեր, մեկը՝ նախերգանքի աշուղը, որ կրում է հեղինակի արժեհամակարգը, մյուսը՝ Շահի պալատական երգիչը, որ իբրև «ծեր, թափառական աղքատ աշուղ» է մուտք գործում Թմկաբերդ: Պատահական չէ, որ ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ դեպքում ուղղակի ակնարկ չկա, թե ովքեր են գեղեցկության այդ երկու հիմների հեղինակները: Դա Թումանյանի բանաստեղծական մտածողության կերպն է՝ շատ բան թողնել ընթերցողի երևակայության կռահմանը՝ ստեղծագործելու բավականությանն անմասն չթողնելով նրան: Իսկ կռահելը այնքան էլ դժվար չէ: Երկու աշուղն էլ տեսնում ու գնահատում են գեղեցիկը: Սակայն մեկի համար դա բարձր առաքինություններ ծնող ուժ է, մյուսի համար՝ նենգավոր դավերի գործիք: Սա կապվում է մարդու, հասարակությունների կյանքում Գեղեցիկի, ավելի լայն առումով՝ արվեստի դերի ու նպատակների մասին թումանյանական հայտնի պատկերացումների հետ, որ նրա անավարտ գլուխգործոցի՝ «Հազարան բլբուլի» առանցքային բարոյականը պիտի լիներ. արվեստը գազանացած մարդուն վերադարձնելու էր մարդ-

Կիրակոսյան Վ.

կային կերպարանքը: Քանի դեռ Թմկա չքնաղ տիրուհին հավատարիմ է իրեն շնորհված «մաքուր գեղեցկության հանճարին»¹¹, անպարտելի է Թաթուլը, իսկ երբ այդ բարձրագույն շնորհը զոհում է նենգավոր աշուղի գայթակղանքին, կործանարար չարիք է ծնում: Կարճ ասած՝ «Թմկաբերդի առումը» պոեմի այսպես կոչված «գլխավոր հերոսները» ոչ թե Թաթուլը, շահը կամ Թմկա տիրուհին են, այլ նախերգանքի աշուղը և Շահի «թովիչ երգիչը»: Մեկը «անարատ մարդու» թումանյանական իդեալի կրողն է, մյուսը դրան միշտ ուղեկցող «անմեռ չարի» սպասավորը:

Այս կենսափիլիսոփայության շրջանակներում է գործառում գայթակղիչ աշուղի կերպարը, որ, ինչպես արդեն նկատել ենք, բանահյուսական նախօրինակներում բացակայում է և ամբողջապես հեղինակային մտահղացում է:

Պոեմի վերջում, երբ արդեն կատարված է ողբերգությունը, ընթերցողն իրեն հարց է տալիս՝ դրա նյութողներից ո՞վ է ավելի արժանի անեծքի՝ Շահը, Թմկա տիրուհին, թե՞ Շահի «թովիչ երգիչը»:

Շահը արևելյան բռնակալ է: Նրա նպատակն է տիրել Թմկաբերդին, և նա ոչ մի միջոցի առջև կանգ չի առնում՝ դրան հասնելու համար: Նա գործում է «նպատակը արդարացնում է միջոցը» ծանոթ սկզբունքով և այդ դիտակետից էլ դատում է կյանքի մասին.

Աշխարհում հաստատ չկա ոչ մի բան,
Ու մի հավատա երբեք ոչ մեկին,
Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,
Ոչ սիրած կնկա տված բաժակին¹²:

Սա, իհարկե, չի նույնանում իրերի հավերժական շարժման ու փոփոխության մասին թումանյանական հայտնի կենսահայեցության հետ, ինչպես դա դրսևորվել է, ասենք, «Էսպես չի մնա» բալլադում կամ քառյակներում, որտեղ փոփոխությունը վերաբերում է ձևին, իսկ էությունը՝ հոգին, հավիտենական է.

Հազար էսպես ձևեր փոխեն, ձևը խաղ է անցավոր,

¹¹ Այսպես է բնութագրում կնոջ գեղեցկությունը Ա.Ս. Պուշկինը Կ. Ա. Պ. Կեռնին ձոնված իր հայտնի բանաստեղծության մեջ.

Я помню чудное мгновенье:
Передо мной явилась ты,
Как мимолетное виденье,
Как гений чистой красоты.

¹² Պոեմի առաջին տպագրության տեքստում այս քառատողը, որ, ինչպես կտեսնենք, կարևոր անցումային օղակ է կոնֆլիկտի դրամատիկ հանգուցալուծման շղթայում, բացակայում է:

Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը...

Ես մի հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՞նչ կա որ:

Շահը չի հավատում ոչնչի ու ոչ մեկի, անգամ ինքն իրեն: Նա իր հաշվենկատ փորձի դիտակետից է գննում իրերի դրվածքը: Այսպես թե այնպես՝ հանձին Շահի, Թումանյանը ամենևին նպատակ չի ունեցել ստեղծելու արևելյան բռնակալի տիպ. ընթերցողի գիտակցության մեջ այդ տիպը արդեն կա բազմաթիվ այլ աղբյուրներից:

Պատումի երեք դրվագներում էլ, որտեղ հանդիպում ենք Շահին, նա հեղինակային մտահղացման մեջ միայն օժանդակ դեր է կատարում: Առաջին դրվագում նրա հոխորտ սպառնալիքները միայն ընդգծում են Թաթուլի ինքնավստահ հանգստության էպիկական վեհությունը, երկրորդում կարևորվում են միայն նրա շռայլ խոստումները, որոնցով ծայտված աշուղը պիտի գայթակղի Թմկա տիրուհուն, երրորդում նույնպես առաջին պլանում է ոչ թե նա ինքը, այլ նրա դիմում-հարցը՝ ուղղված Թմկա տիրուհուն.

Ու լի դառնությամբ հարցնում է նա

Դալուկ, մարմարիոն Թմկա տիրուհուն.

– Պատասխան տո՛ւր ինձ, մատնիչ սևաջա,

Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն...¹³

Շահը պատժում է դավաճան գեղեցկուհուն: Ուսումնասիրողները տարբեր բացատրություններ են տալիս նրա այդ արարքին: Դպրոցական դասագրքերում, օրինակ, դա բացատրվում է Շահի մտավախությամբ, թե նա վաղը կարող

¹³ Այս քառատողի առաջին և վերջին տողերի վրա Թումանյանը երկար է մտածել: Առաջինը «Մուրճի» տարբերակում (1905) եղել է՝ «Ու լիքը թույնով հարցնում է նա», «Բանաստեղծությունների» Բաքվի հրատարակության մեջ (1908) և «Հայ գրողներ» քրեստոմատիայում (1909, 1914) դարձել է՝ «Ու դառը ծաղրով հարցնում է նա»: Ո՛չ «թույնով», ո՛չ «ծաղրով» բառերը, իրոք, չեն կարող բնորոշել Շահի այն հոգեվիճակը, որ ներկայացված է վերևում բերված նախորդ քառատողում: Իր իսկ արարքից մի պահ զգաստացած չարագործը այլ հայացքով է նայում կատարվածին. Թաթուլը, որին, իրոք, ծաղրանքով էր դիմում առաջին դրվագում, այժմ բարձրանում է նրա աչքում՝ իբրև «քաջ ու սիրուն» հակառակորդ՝ սյուժետային մանրամասն, որ շատ է հանդիպում բանասիրական պատումներում: Եվ տողի բերված երկու տարբերակների միավորումից ձևավորվում է «Ու լի դառնությամբ հարցնում է նա» վերջնական տարբերակը, որ արդեն լիովին համապատասխանում է հոգեբանական իրադրությանը: Առաջին տողի այս փոփոխությունը ինքնաբերաբար փոխում է նաև վերջին տողի շեշտադրությունը: Հիշված երեք տպագիր տարբերակներում վերջին տողը՝ «Քու Թաթուլն արդյոք քա՞ջ էր ու սիրուն», տրամաբանորեն գրեթե չի կապվում նախորդող հարցադրման հնչերանգի հետ: Տարիների մոմտուքներ են պահանջվել բանաստեղծից՝ գտնելու համար հարցի ճշգրիտ շեշտը՝ «Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն»: Նախորդ տարբերակի բացասական հնչերանգը փոխվել է իրադրությանը պատշաճ դրականի:

Կիրակոսյան Վ.

է նաև իրեն դավաճանել: Բացատրություններից մեկն էլ, հավանաբար, կարող է լինել այն, թե Շահի այդ վարմունքը հարգանքի տուրք է դավաճանության զոհ դարձած իր քաջ հակառակորդի հիշատակին: Այս նկատառումով չէ՞ նաև, որ նախերգանքում Շահը, թեև անուղղակիորեն, արժանանում է պատմող աշուղի դրվատանքին.

Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման,

Լավ արարքը, լավ մարդին:

Այսպիսով՝ «թափառական աշուղի» անեծքից թերևս ամենափոքր բաժինը հասնում է Շահին: Իհարկե, նա էլ է չարագործ, քանի որ ուզում է բռնանալ ուրիշի ազատությանը, մարդկային կյանքերի գնով ուզում է ձեռք բերել այն, ինչ իրեն չի պատկանում: Բայց բոլոր դեպքերում հավատարիմ է իր չար բնույթին, չի դավաճանում ինքն իրեն:

Թմկա տիրուհին կնոջ թուլության ու փուչ փառասիրության զոհ է: Այս տեսակետից նրա արարքում Թումանյանը անգամ բանահյուսական փորձով հաստատված որոշակի օրինաչափություն է տեսնում, որ երևում է նրա մի գրառումից. «Երբ մարդն հաղթել է - միշտ կինը խորհրդակից է եղել թշնամուն»¹⁴: Այս դեպքում ևս շատ են գայթակղիչ Շահի շլացուցիչ խոստումներն ու դավադիր աշուղի շողոքորթ լեզվի նենգավոր հմայքը.

Լսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,

Իմ նազելի աննման.

Նայիր Շահի՞ն, իրեն գահի՞ն,

Աշխարհքի տերն անսահման:

Մեզ պես տըկար մարդ է նա էլ՝

Սիրուններին միշտ գերի.

Քո ճակատին թագ է վայել,

Լինես շքեղ թագուհի:

Գայթակղությունը մեծ է: Այնուամենայնիվ, նուրբ հոգեբանի խորաթափանցությամբ բանաստեղծը չի կարող չնկատել ծանր փորձության առջև հայտնված մարդկային բնության երկընտրանքը.

Դավաճան գործի ամոթը խորին

Եվ արքայական փառք ու մեծություն:

Նենգավոր աշուղը, սակայն, անհողդողդ ու հետևողական է. «գիշեր ու ցերեկ, նորից ու նորից» շարունակում է հյուսել իր գայթակղության ոստայնը: Բա-

¹⁴ Թումանյան 1991, 543:

Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը...

նաստեղծը գեղեցիկ գյուտով է ներկայացնում իրադարձությունների շրջադարձային պահը: Կռիվը գնում է երկու ճակատով. դրսում բախվում են հակառակորդ բանակները, ներսում նենգության դևը վարում է իր մութ կռիվը, դրսում հաղթում է քաջությունն ու ազնվությունը, ներսում՝ մութ դավադրությունը: Ու Թմկա տիրուհին դառնում է «լուռ, դալուկ, մտախոհ», քունը փախչում է «սիրուն աչքերից»:

Եղել են կարծիքներ, հատկապես Թումանյանի կենդանության ժամանակ, թե նրա հերոսները հոգեբանություն չունեն: Հաշվի չի առնվել երկու կարևոր հանգամանք: Առաջին՝ որ, եթե վիպասանը իր հերոսների ներաշխարհի շարժումը ներկայացնում է ծավալուն վերլուծություններով, էպիկ բանաստեղծը ժանրի պահանջով հարկադրված է խտացնել մեկ-երկու դիպուկ արտահայտության, տողի կամ նախադասության մեջ. Թմկա տիրուհու հոգեկան շրջադարձի նկարագրությունը դրա լավագույն օրինակներից է: Երկրորդ՝ որ Թումանյան էպիկ բանաստեղծին, հատկապես «Թմկաբերդի առումը» պոեմում, զբաղեցնում են ոչ այնքան անձնավորված կերպարները, որքան նրանց միջոցով ներկայացվող երևույթները¹⁵: Պոեմում Թմկա տիրուհուն բանաստեղծը տարբեր կողմերից և շատ ավելի հանգամանորեն է ներկայացնում, քան մյուս գործող անձերին¹⁶: Դա ցույց է տալիս, որ նա ևս կրում է մտահղացման հիմնական իմաստային բեռնվածության իր բաժինը: Բայց ինչո՞ւ բոլոր այն դրվագներում, որտեղ խոսք է գնում նրա մասին, հեղինակային միտում է նկատվում ըն-

¹⁵ Ժամանակին դա նկատել է նաև Լ. Հախվերդյանը: ««Թմկաբերդի առում» մեջ, գրում է նա, ի տարբերություն «Հառաչանքի» և «Անուշի» և ի նմանություն «Ախթամարի» ու «Փարվանայի», պոետն իրեն առաջադրել է ոչ թե գործող անձանց հոգեբանական նրբությունների, այլ անցքի, երևույթի բացահայտման խնդիրը» (Հախվերդյան 1966, 339): Բայց դա ոչ թե հետևանք է նյութի բանահյուսական ծագման, ինչպես բացատրում է ուսումնասիրողը, այլ բխում է բանաստեղծի մտահղացման բուն բնույթից:

¹⁶ Թմկա տիրուհին արտասովոր գործնական եռանդով աչքի է ընկնում հատկապես խնջույքի տեսարանում: «Լիքն ու առատ բաժակներ քամելու» նրա հետևողական հորդորները անհանգստացնում են անգամ խնջույքի մասնակիցներին՝ գուցե նաև առաջացնելով ինչ-որ կասկածներ: Չափազանց «հոգնած ու հարբած» վիճակը միանգամայն բավարար հիմք է աղետալի գիշերվա մղձավանջային երազների համար: Այս պահը հատուկ ուսումնասիրություն է պահանջում՝ կապված երազի ու նախազգացումի մասին Թումանյանի հայտնի մտքերի հետ: Բայց դա այս հրապարակման խնդիրներից դուրս է: Նկատենք միայն, որ զարմանք է հարուցում հմուտ թումանյանագետ Էդ. Ջրբաշյանի այն միտքը, թե՝ «Հեքիաթային պոետիկայի զինանոցից է քաղված պատուհասից առաջ Թաթուլի տեսած երազի տեսարանը, թեև պետք է խոստովանել, սա միակ հատվածն է, որը էական որևէ բան չի ավելացնում, նույնիսկ մասամբ կարծեք դուրս է մնում պոեմի սրընթաց զարգացման տեմայից (Ջրբաշյան 1986, 364):

Կիրակոսյան Վ.

թերցողի գիտակցությանը հասցնել ամենից առաջ նրա գեղեցկությունը: Անգամ վերջին դրվագում, երբ նա արդար դատաստանի առջև կանգնած էր արդեն իբրև դավաճան հանցագործ՝ անկախ իրեն ուղղված ճակատագրական հարցի պատասխանից (նա կործանված էր արդեն շահին տված իր հանդուգն պատասխանից առաջ)¹⁷, Շահը «մատնիչ սևաչա», «մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն» արտահայտություններով ակնարկում է մի կողմից քաջության ու գեղեցկության, մյուս կողմից՝ դավաճանության ու մատնության անհամատեղելիության մասին: Ուրեմն Թմկա տիրուհու հանցանքներից ո՞րն է ավելի մեծ՝ սովորական դավաճանությունը, որ առկա է Թումանյանի ծեռքի տակ եղած բոլոր բանահյուսական տարբերակներում, թե՞ մեղանչումը գեղեցիկի սրբության հանդեպ: Իզուր չէ բանաստեղծի ափսոսանքը կործանված գեղեցկության համար.

Անցավ անտես ու աննման
Էն սիրունը աշխարհից,
Ինչպես ծաղիկն անցած գարնան,
Որ չի ծաղկիլ էլ նորից:

Ուրեմն դավաճանությունն ինքնին հավիտենական անեծքի արժանի հանցանք է, բայց երբ կատարվում է գեղեցիկի անձեռնմխելի սրբության դեմ մեղանչումով, հանցանքի մեծությունը հնարավոր չէ չափել երկրային չափանիշներով, քանի որ, ըստ էության, մեղանչում է շնորհող երկնային նախախնամության առջև:

Մտահղացման այս պլանում է գործառում նաև երկու աշուղների ներկայությունը պոեմում: Նախերգանքի սևագիր տարբերակում, ինչպես տեսանք, դա մի քանի անորոշությունների տեղիք էր տալիս: Վերջնական տեքստում դրանք վերացել են՝ գործառույթների հստակ տարբերակումով:

Պատմող աշուղը, որ նախերգանքում ներկայանում է որպես ժողովրդական ասացող, հետագա մարդկային արարքների և կատարվող իրադարձությունների քննիչ դատավորն է: Նախապես շարադրելով իր կայացնելիք վճիռների բարոյական հիմքերը՝ նա դրանով նաև կանխորոշում է պատումի կառուց-

¹⁷ Ուսումնասիրողներից յուրաքանչյուրը այդ պատասխանին իր մեկնաբանությունն է տվել՝ իր հիմնավորումներով, որոնցից ոչ մեկը անառարկելիորեն ոչ կարելի է հերքել, ոչ հաստատել: Այդ պատասխանը, կարելի է ասել, թումանյանական «Մոնա Լիզայի» ժպիտն է, որի մեկնաբանության վրա արդեն քանի դար է գլուխ են կոտրում ուսումնասիրողները, բայց առանց արդյունքի, որովհետև արվեստի ստեղծագործությունը ամեն նոր սերնդի ու նոր ուսումնասիրողի առաջադրում է նոր հանելուկներ:

վաճքը, այսինքն՝ բոլոր հանգուցային օղակները սյուժետային շղթայում արդարացնում են իրենց տեղը՝ ըստ էության, որպես նախերգանքում ամրագրված բարոյական արժեքների կենսական հաստատում: Իզուր չէ, որ պոեմի վերջում «թափառական աշուղը» նորից անդրադառնում է նախերգանքում իր սահմանած բարոյական արժեքներին՝ արդեն որպես ընթերցողական փորձով հաստատված ճշմարտությունների:

Գայթակղիչ աշուղի կերպարը ամենից քիչ է զբաղեցրել ուսումնասիրողներին՝ իբրև ոչ այնքան կարևոր սյուժետային մանրամասն: Մինչդեռ, ինչպես փորձեցինք ցույց տալ վերևի շարադրանքում, դա կենտրոնական խնդիր է պոեմի բարոյափիլիսոփայության մեջ:

Պահպանված սևագիր հատվածների վերլուծությունը ցույց էր տալիս, որ Թմկա տիրուհուն գայթակղելով՝ ամրոցին տիրանալու գաղափարը Շահին հուշել է ամենայն հավանականությամբ նրա «թովիչ երգիչը»: Նա նաև ի վերուստ շնորհյալ աշուղ-արվեստագետ է, որ կարողանում է տեսնել ու գնահատել գեղեցիկը: Բայց Թումանյանի արտահայտությամբ՝ «քչերի հասկացած գեղեցիկի» պաշտամունքը արվեստագետից պահանջում է անվերապահ ու անմնացորդ նվիրում: Դա արվեստի թումանյանական փիլիսոփայության հիմնարար արժեքներից է, որի լույսի տակ է նա տեսնում ու իմաստավորում աշխարհի ու մարդկային կեցության բոլոր լավ ու վատ երևույթները: Պոեմում այս հարթության վրա է դիտվում իր կոչմանը դավաճանած գայթակղիչ աշուղի կերպարը:

Սակայն նրա այդ արարքը, որ ամենից ավելի էր արժանի պատժվելու, երևութապես մնում է անպատիժ, իր սև գործն ավարտելուց հետո նա անհետանում է ասպարեզից: Պարզունակ բացատրությունն այն կլիներ, թե նա մեծ ծառայություն էր մատուցել Շահին, ուստի պետք է արժանանար պարգևի և ոչ թե պատժի: Բայց հայտնի է, որ արևելյան բռնակալները իրենց խարդավանքների կամակատարներին օգտագործելուց հետո վերացնում են, նրանց, որպեսզի մաքրեն հանցանքի հետքերը: Պոեմում այդ արարքի համար շատ ավելի ծանր պատիժ է սահմանված՝ սերունդների հավիտենական անեծքը:

Չարն էլ է միշտ ապրում անմեռ.

Անեծք նրա չար գործին:

Ուսումնասիրողները «չար գործի» շրջանակներում սովորաբար դիտում են Շահի և Թմկա տիրուհու կերպարները, գայթակղիչ աշուղին անդրադառնում են հարևանցիորեն կամ առահասարակ չեն էլ հիշում: Մինչդեռ իրադարձությունների ամբողջ ընթացքը ցույց է տալիս, որ չարիքի մայր արմատը նրա արարքն է. հուշել է Շահին նենգավոր գաղափարը, և ինքն էլ իրագործել է այն՝

Կիրակոսյան Վ.

թույլ տալով «դավաճան գործի» մեծագույնը՝ իր արվեստը ծառայեցնելով «չարին»:

Էդ. Զրբաշյանը վերևում հիշված իր հայտնի մենագրության մեջ «Թմկաբերդի առումը» պոեմին նվիրված գլուխը վերնագրել է «Թումանյանի երազանքը»: Ճիշտ բնորոշում է: Թումանյանը, իրոք, մեծ երազանքի բանաստեղծ է: Այդ մասին ուղղակի խոստովանությունների շատ ենք հանդիպում նրա բազմաթվանդակ ստեղծագործության ամենատարբեր էջերում: Ահա, օրինակ, դասեր՝ Անուշի ալբոմում գրած «Քոշաքարում վազել եմ ես...» բանաստեղծության հայտնի քառատողը, որ հաճախ է մեջբերվում ուսումնասիրություններում..

Իմ երազը շատ էր շքեղ,
Դրախտ պիտեր քաղաք ու գեղ.,
Երգը հոսեր հառաչքի տեղ,
Սերն ու բարին Արագ, Անուշ:

«Թմկաբերդի առումը» բանաստեղծի այդ «շքեղ երազի» թերևս ամենակատարյալ գեղարվեստական արտահայտությունն է նրա ողջ ստեղծագործության մեջ: Պոեմում այդ երազանքի առաքյալներն են Թաթուլ իշխանը՝ «բարձր ու ազնիվ» տղամարդկային նկարագրով, նրա «շունչ, հոգի» Թմկա տիրուհին՝ երկնապարզ գեղեցկությամբ, աշուղ-արվեստագետը՝ կատարյալին ու գեղեցիկին ինքնուրաք նվիրվելու աստվածային պատվիրանով: Թումանյան արվեստագետն ինքն էլ ծնվել էր աշխարհն ու մարդուն գեղեցկացնելու բարձր առաքելությամբ և այդ առաքելության խոր գիտակցությամբ, որ թանձր նստվածքներ է թողել «Իմ երգը» բանաստեղծության հանգանակային տողերում: «Ծով բարություն», «Չնորիք ու սեր» «աշխարհով մին» առատ-առատ շաղ տալու, գեղեցիկը տեսնելու, գեղեցիկ ապրելու, գեղեցիկ ապրեցնելու շնորհը արարչական «ճոխ պարզ» է ընտրյալ մահկանացուներին: «Այս անցավոր աշխարհում» նրանց համար երկու ճանապարհ կա. «իդ տվածը իրեն տալով», այսինքն՝ մարդկանց ծառայեցնելով, միանալ իրենց հոգևոր սկզբին, այսինքն՝ անմահանալ, կամ մնալով արարչի պարտապանը՝ արժանանալ սերունդների հավիտենական անեծքին: Այս վերջիններից է Թմկա տիրուհին, որ սիրով ու գեղեցկությամբ թևավորելով Թաթուլ իշխանի արծվային թռիչքները, աստվածային շնորհի պարտքն էր հատուցում շնորհողին: Բայց չկարողացավ մինչև վերջ կրել այդ ազնիվ առաքելության ծանրությունը, կործանվեց ինքը՝ իր հետ կործանելով մի ուրիշ փառահեղ գեղեցկություն: Նաև գայթակղիչ աշուղը, որ թյուրիմացաբար է կրում գեղեցիկը տեսնելու և գեղեցիկ ներկայացնելու ընտր-

Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը...

յալների շնորհիվ, քանի որ դա նրա ձեռքին դառնում է ոչնչով չարդարացվող ծանրագույն հանցանքի գործիք:

Եզրակացություն

«Թմկաբերդի առումը» բանահյուսական նյութի սովորական մշակում չէ. ավանդությունը բանաստեղծին հուշել է միանգամայն ինքնուրույն մտահղացում: Թմկաբերդի պարիսպների ներսում նա ստեղծել է գեղեցիկի, բարու ու երջանկության՝ իր երազանքի աշխարհը, ինչպես, ասենք, «Ոսկի քաղաքը» հեքիաթում: Բայց քանի դեռ աշխարհում կան անարգված գեղեցկություններ և գեղեցկություն անարգողներ, քանի դեռ կա իր բարձրագույն նպատակին չծառայող արվեստ, կան իրենց կոչմանը դավաճանող արվեստագետներ, քանի դեռ պոետները հարկադրված են պղծել «իրենց շուրթերն անեծքով», «անմեռ» բարուն միշտ էլ պիտի ուղեկցի «անմեռ» չարը, կատարյալ աշխարհի և կատարյալ մարդու երազանքը երազանք էլ պիտի մնա: Կյանքը կյանք ու մարդուն մարդ պահողը, սակայն, այդ երազանքի անմահությունն է:

Վերևի շարադրանքով փորձ արվեց հիմնավորելու այս հետևությունը: Թե որքանով հաջողվեց, թող դատի ընթերցողը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տերտերյան Ա. 1911, Հայրենի եզերքի քնարերգուն, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 82 էջ:

Մկրյան Մ. 1981, Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Երևան, «Սովետական գրող», 373 էջ:

Հախվերդյան Լ. 1966, Թումանյանի աշխարհը, Երևան, «Հայաստան», 500 էջ:

Ջրբաշյան Էդ. 1986, Թումանյանի պոեմները, Երևան, ԵՊՀ հրատ., 482 էջ:

Թումանյան Հովհ. 1991, Երկերի լիակատար ծողովածու տասը հատորով, հ. 4, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 624 էջ:

Թումանյան Հովհ. 1995, Երկերի լիակատար ծողովածու տասը հատորով, հ. 7, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 720 էջ:

Թումանյան Հովհ. 1908, Բանաստեղծություններ, Բաքու, Հայոց հրատարակչական ընկերություն, 280 էջ:

Հայ գրողներ, քրեստոմատիա, 1909, 1914:

«Մուրճ», ամսագիր, 1905, թիվ 1, թիվ 2–3:

«Նոր ուղի» օրաթերթ, 1910, մայիսի 5:

**ПОЭМА ТУМАНЯНА «ВЗЯТИЕ ТМКАБЕРДА»
(попытка иного прочтения)**

КИРАКОСЯН В.

Резюме

Ключевые слова: народное предание, авторский замысел, цель искусства, призвание художника, культ красоты, измена, варианты стихотворений.

Статья являет собой попытку новой интерпретации общеизвестной поэмы О. Туманяна. Мечта об идеальном мире и идеальном человеке рассматривается поэтом в контексте культа красоты и призвания художника. Читатель приходит к убеждению, что до тех пор, пока есть в мире осквернители красоты и изменившие своему призванию художники, мечта об идеальном мире и человеке останется невоплощенной, хотя и жизнь в целом поддерживается бессмертием этой мечты.

**THE “THMBKBERD CAPTION” POEM BY TOUMANYAN
(alternative reading try)**

KIRAKOSYAN V.

Summary

Key words: folk tradition, afthor’s idea, aim of art, title artist, a cult of beauty, betrayal, versions of poem.

This article is an alternative reading of Toumanyan’s poem. Doing a purposeful analysis of the poem’s extracts from draft versions and finished text the author tries to show that this time, Toumanayan examines the ideal man and the ideal world in the context of the vocation of an artist and beauty cult. The poet persuades the reader that as there still exist desecrated beauties in the world and those who desecrate the beauties, and artists who betray their vocation, the dream of an ideal world and ideal man will stay only as a dream. Although the eternity of this is what keeps a man as a man and life as life.